Իշխանության ապագան Թուրքիայում. ընտանեկան ձևաչափ

ԱՌՎԱԿ Կենտրոնի մեկնաբանությունը, 01.04.2024 թ.

30.03.2024 թ. *The Wall Street Journal-ը* հոդված է հրապարակել հաջորդ նախագահական ընտրություններում Թուրքիայի նախագահ Էրդողանի հնարավոր իրավահաջորդի մասին: Ըստ հանդեսի՝ դա կարող է լինել Թուրքիայի առաջնորդի փեսան՝ Սելջուկ Բայրաքթարը: Էրդողանի հետ ընտանեկան կապերի գործոնից բացի, նա մեծ հեղինակություն է վայելում թուրքական հասարակության մեջ և, առաջին հերթին, Թուրքիայի մարտական անօդաչու ավիացիայի ստեղծման ծրագրի մշակման և իրականացման շնորհիվ: Ըստ *The Wall Street Journal-ի*՝ հենց Ս. Բայրաքթարի ձեռնարկություններում արտադրված անօդաչու սարքերն էին օգնել կասեցնել *«Ռուսաստանի առաջխաղացումը ուկրաինական տարածքում»:* Դրանք նաև Ադրբեջանի կողմից *«հաջողությամբ կիրառվել են»* 2020 թ. Ղարաբաղում հայկական ուժերի դեմ: Եվ դրանց օգնությամբ է, որ *«չեզոքացվեցին Մոսկվայի դաշնակից մարշալ Խալիֆա Հաֆթարի հարձակումները»* Լիբիայի մայրաքաղաք Տրիպոլիի վրա:

Հոդվածում նաև նշվում է, որ անցյալ տարվա աշնանը *The Wall Street Journal-ին* տված հարցազրույցում Ս. Բայրաքթարն ասել էր, որ ինքը *«ակտիվ քաղաքականությամբ չի զբաղվում»,* սակայն, եթե իր աները՝ Էրդողանը դիմի իրեն նման առաջարկությամբ, ապա նա դեմ չի լինի առաջադրվել ապագա նախագահական ընտրություններում: *«Ամեն ինչ կախված է հանգամանքներից»,* – ասել է Բայրաքթարը:

Դժվար թե այս հոդվածի հրապարակումը կարելի է պատահական համարել Թուրքիայում կայանալիք միջանկյալ ՏԻՄ ընտրությունների նախաշեմին, որոնց արդյունքները, ինչպես պարզվեց, աղետալի դարձան Էրդողանի և իշխող ԱԶԿ կուսակցության համար: Իշխող կուսակցությունը պարտվել է ընդդիմությանը երկրի բոլոր առանցքային շրջաններում, ինչպես նաև մեծ քաղաքներում, այդ թվում՝ մայրաքաղաք Անկարայում: Կարելի է ենթադրել, որ Բայրաքթարի անվան հիշատակումը երկրի ապագա քաղաքական իշխանության համատեքստում համաշխարհային հայտնի հրատարակության կողմից պայմանավորված էր նրա աներոջ՝ Թուրքիայի ղեկավարի ցանկությամբ՝ բացել իր խաղաքարտերն ու առաջ անցնել, մինչ նրա պարտության հայտնի դառնալը: Ի վերջո, այն փաստը, որ ԱԶԿ-ի հաղթելու շանսերը շատ կասկածելի են, և որ Էրդողանը դառնում է հենց իշխող կուսակցության «կաղ բադիկը», կարծես թե պարզ էր արդեն ընտրությունների նախօրեին:

Այնպես որ, կարելի է ակնկալել, որ մոտ ապագայում Էրդողանն ինքը հանրությանը կներկայացնի իր փեսային՝ Ս. Բայրաքթարին որպես նախագահի թեկնածու: Ի դեպ, ԱՌՎԱԿ կենտրոնը 2023 թ. նախագահական ընտրությունների նախաշեմին արդեն իսկ կանխատեսել էր նման կոմբինացիայի մեծ հավանականություն: Այնուամենայնիվ, այն

ժամանակ Էրդողանը հաղթեց մրցավազքում, մինչդեռ ԱԶԿ-ի ձախողումը ՏԻՄ ընտրություններում սպառնում է Թուրքիայի ներկայիս ղեկավարին քաղաքական իշխանության լիակատար և, հնարավոր է, վաղաժամ կորստով:

«Երամին նոր առաջնորդ է պետք» – կուսակցությանը նոր դեմք է պետք: Եվ եթե Էրդողանի ընտրությունը, այնուամենայնիվ, կանգ առնի Բայրաքթարի վրա, դա կնշանակի, որ գործող նախագահը խաղադրույքը դնում է փեսայի հետ ընտանեկան կապերի, նրա խարիզմայի և հանրային համակրանքի բարձր վարկանիշի վրա: Այսպիսով, կանխատեսումները, թե՝ Էրդողանը, արտաքին գործերի նախարարի պաշտոնում առաջադրելով Հաքան Ֆիդանի թեկնածությունը, իրեն իրավահաջորդ է պատրաստում MIT-ի՝ Թուրքիայի ազգային հետախուզական կազմակերպության նախկին ղեկավարին, կարող են չարդարանալ: Ի դեպ, թեև ծագումով քուրդ Ֆիդանը վայելում է Էրդողանի անվիճելի վստահությունը, ունի կառավարման անհրաժեշտ հմտություններ և, բնականաբար, մանրամասն տեղեկացված է կառավարական ողջ անցուդարձին, այնուամենայնիվ, նա չունի անհրաժեշտ քաղաքական խարիզմա և անհատական «փայլ»: Նրա հոգեկերտվածքը և հակվածությունը ոչ հրապարակային լինելուն բնորոշ են հատուկ ծառայությունների դասական կադրին, ինչը, հավանաբար, սեփական քաղաքական փորձով առաջնորդվող Էրդողանի աչքերում նրան դարձնում է ԱԶԿ-ի վերաբրենդավորման համար ոչ այնքան հարմար կերպար:

Համենայնդեպս, դեռևս հաստատում չկա այն մասին, որ Էրդողանը (վերջնականապես) կողմնորոշվել է իր իրավահաջորդի ընտրության հարցում: Չի կարելի նաև բացառել, որ նա դեռ կարող է դիմել ոչ ստանդարտ լուծման: